Հավելված
ՀՀ վարչապետի 2009 թ.
հուլիսի 28 -ի N 626 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ վարչապետի 2009 թ.
մարտի 31-ի N 266 - Ա
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ ՈՒ Յ Յ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Միջոցառման բովանդակությունը	Միջոցառման իրականացման նպատակով ընդունվելիք փաստաթղթին ներկայացվող պահանջները	Կատարման ժամկետը	Իրականացնող մարմինները
1	2	3	4	5
1.	Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման հայեցակարգի մշակում և այն ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	Հայեցակարգը պետք է սահմանի ՀՀ բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման պետական միասնական քաղաքականության գերակայությունները, հիմնական սկզբունքները և ուղղությունները, կայուն կառավարման համակարգի հիմքերը։ Հայեցակարգը պետք է առաջարկի համապատասխան ծրագրեր՝ բնագավառի իրավական, տնտեսական, ինստիտուցիոնալ և տեխնիկական բարեփոխումների համար։	մինչև 2010 թ. փետրվարի 1-ը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)

1	2	3	4	5
2.	Աղբահանության և սանիտարական մաքրման բնագավառի իրավական ակտերի նախագծերի փաթեթի մշակում	Սանիտարական մաքրման և աղբահանության ոլորտի իրավահարաբերությունների՝ գործունեություն իրականացնող անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքների և պարտականությունների հստակեցում, ՀՀ մի շարք օրենքներում փոփոխություն կատարելու, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այլ իրավական ակտեր ընդունելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը	մինչև 2009 թ. հոկտեմբերի 1-ը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
3.	Ըստ սանիտարական մաքրման աշխատանքների որակին ներկայացվող պահանջների՝ քաղաքի փողոցների և հրապարակների նոր դասակարգման մշակում և հաստատում՝ մակերեսների ճշգրտմամբ	Ելնելով սանիտարական մաքրման որակին ներկայացվող պահանջներից՝ մշակվում և Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատվում է քաղաքի փողոցների և հրապարակների նոր դասակարգում՝ մայրաքաղաքային նշանակության փողոցների և հրապարակների ու համայնքային նշանակության փողոցների և հրապարակների (վերջիններս ըստ բարեկարգվածության աստիճանի դասակարգվում են 1-3-րդ կատեգորիաների)։	մինչև 2009 թ. հոկտեմբերի 1-ը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստի պետական կոմիտե
4.	Սանիտարական մաքրման ձեռքի և մեքենայական աշխատանքների միասնական նորմատիվների, տեխնոլոգիական և արժեհաշվարկի կարգի մշակում և հաստատում	Հաշվի առնելով Երևան քաղաքի փողոցների և հրապարակների նոր դասակարգումը և դրանց մաքրման որակին ներկայացվող ներկա պահանջները՝ ուժը կորցրած է ճանաչվում Երքաղսովետի գործկոմի 1988 թ. մարտի 2-ի N 5/54 որոշումը, մշակվում և Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատվում են Երևան քաղաքի համար սանիտարական մաքրման ձեռքի և մեքենայական աշխատանքների իրականացման՝ միասնական տեխնոլոգիական կարգը և պարբերականությունը, սպասարկման միասնական նորմաները, սանիտարական մաքրման աշխատողների վարձատրության միաս-նական դրույքաչափերը, արժեհաշվարկի օրինակելի տարբերակը։	մինչև 2009 թ. նոյեմբերի 1-ը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)

1	2	3	4	5
5.	Սանիտարական մաքրման որակի նկատմամբ վերահսկողության համակարգի մշակում և ներդրում	Մշակվում և Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատվում է քաղաքապետարանի համապատասխան կառույցների կողմից քաղաքի փողոցների և հրապարակների սանիտարական վիճակի ամենօրյա հսկողության իրականացման ու մաքրության վիճակի գնահատման կարգը: Գնահատման սանդղակը և չափանիշները պետք է ներառվեն նույն կարգի մեջ: Կարգը պետք է պարունակի հայտնաբերված թերությունների վերացման պայմաններն ու ժամկետները, ինչպես նաև պետք է սահմանի մաքրման աշխատանքների կատարողականների վճարման վրա սանմաքրման որակի գնահատականի ազդեցության մեխանիզմը և չափերը:	մինչև 2009 թ. նոյեմբերի 1-ը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
6.	Կենցաղային աղբի կուտակման հաշվարկային նորմաների մշակում	ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվում առաջարկություն ըստ աղբ գոյացնող օբյեկտների (բնակչություն, առողջապահության, կրթության, առևտրի, հանրային սննդի, մշակույթի, կենցաղ-սպասարկման և հանրային ոլորտի այլ օբյեկտներ) կենցաղային աղբի կուտակման միասնական հաշվարկային նորմաների մշակման և ընդունման վերաբերյալ:	մինչև 2009 թ. նոյեմբերի 1-ը	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
7.	Բնակչությունից կենցաղային աղբահանության վարձավճարների գանձման միասնական կարգի մշակում	Մշակվում և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվում առաջարկություն Երևան քաղաքի բնակիչներից և կենցաղային աղբ գոյացնող օբյեկտներից աղբահանության վարձավճարների չափի, գանձման միասնական կարգի, աղբահանության պայմանագրի ձևի, բնակիչներից և օբյեկտներից վարձավճարի գանձման միասնական մեխանիզմի (կոռուպցիոն ռիսկ չպարունակող) և դրա նկատմամբ վերահսկողության կարգի վերաբերյալ:	մինչև 2009 թ. նոյեմբերի 1-ը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
8.	Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանության և շինարարական նորմերի մշակում	Նորմաները պետք է սահմանեն հանրապետության բնակավայրերում կենցաղային աղբի կուտակման, հավաքման, տեղափոխման, վերամշակման և տեղադրման բնագավառների օբյեկտների պահպանման, շահագործման, նախագծման և	մինչև 2009 թ. նոյեմբերի 1-ը	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ քաղաքաշինության

1	2	3	4	5
		կառուցման պահանջներ։		նախարարություն
9.	Երևան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները միասնական օպերատորի (կամ օպերատորների) միջոցով իրականացնելու համար մրցութային փաթեթի նախապատրաստում և միջազգային մրցույթի կազմակերպում	Մրցութային պայմաններում պետք է ներառվեն աղբավերաբարձման, տեսակավորման և աղբավերամշակման կայանքների կառուցման, աղբի հավաքման ու կուտակման համար մեքենամեխանիզմների ձեռքբերման, սանմաքրման ու աղբահանության սխեմաների մշակման ու կիրառման վերաբերյալ ներդրումային առաջարկները։ Մրցութային փաթեթը նախապես քննարկվում է ՀՀ վարչապետի մոտ։	մինչև 2010 թ. դեկտեմբերի 1-ը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ